

Ե. ՕՏՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՈՒՂՂՎԱԾ Ա. ԶՈՊԱՆՅԱՆԻՆ

Հայ մեծ երգիծարան, վիպասուն ու հրապարակախոս Երվանդ Օտյանի նամակները՝ ուղղված Արշակ Զոպանյանին (թվով 20 հատ) մեծ մասամբ գրված են 1896—1900 թթ. ընթացքում, միայն երկուսը՝ 1919 թ.:

Նամակները հասարակական-քաղաքական և կենսագրական նշանակություն ունեն, օգնում են լրացնելու և լուսարանելու հեղինակի կենսագրության, աշխարհայացքի առանձին կողմերը, գաղափար և տալիս տվյալ շրջանում նրան զրազեցնող ինդիվիդուալի ու ծրագրերի մասին: Դրանց մեջ հանդիպում ենք նաև ժամանակի մի շարք հուզող հարցերի պատասխաններին, տեղեկություններ ենք քաղում այս կամ այն անձնավորության, այս կամ այն դեպքի, միջավայրի վերաբերյալ և այլն:

Նամակները նոր տեղեկություններ են տալիս ժողովրդական մեծ գրողի կյանքի մի քանի կարևոր շրջանների՝ Աթլենքում, «Շարապասի ագարակում», Վիեննայում, Լոնդոնում ապրած, ինչպես և 1915—18 թթ. աքսորի տարիների մասին: Օտյանի օրինակից երևում է, թե ինչքան դժվարին է եղել տարագիր ու թափառական արևմտահայ գրողի վիճակը, որը օրվա հացի համար ամեն ինչով զբաղվում էր, իր թանկագին ժամանակը ստիպված էր հատկացնել չսիրած գործերին, այն վատնել թափառումների քառուղիներում: Ճարակության բերած չարիքներից մեկն էլ այն էր, որ զրույր, կտրվելով հարազատ ժողովրդից, հայկական միջավայրից, ոչ միայն ստեղծագործական խթան չէր ստանում, այլև «լեզվական ձգնաժամ» էր ապրում, որը չէր կարող չանդրադառնալ նրա երկերի գեղարվեստական որակի վրա: Որքան բնորոշ է, երբ արարական մի խուլ գյուղի՝ Շարապասի մոտերքում հաշվապահի պաշտոն վարող Օտյանը իր մասին ասում է. «Գրած միջոցիս բառ գտնելու համար սոսկալի նեղություն կկրեմ կոր»:

Ստորև հրապարակում ենք Օտյանի հիշյալ նամակներից առավել արժեքավորները՝ աննշան կրճատումներով: Նամակների բնագրերը գտնվում են ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության Գրականության և արվեստի թանգարանի՝ Ա. Զոպանյանի ճոնդում:

Ա. Մ. ՄԱԿԱՐՅԱՆ.

Փ Ա Ս Ա Ք Ղ Ք Ե Ր

1.

Աթենք, 1/13 հոկտեմբեր 1896

Սիրելի Արշակ

Չորեքշաբթի իրիկուն 25 հոկտեմբերի Տիգրան Երկաթ իր conférence-ը ըրավ Աթենքի Syllouque littéraire du Parnasse-ի մեջ: Բանախոսության տիտղոսն էր «La Grèce et l'Arménie» մեկ ու կես ժամ և պարզեց երկու ազգերու լանցյալ հարաբերությունները, հայերուն և հույներուն ցեղային նույնությունը, իրենց բնության և նկարագրի նմանությունները և այլն, խոսեցավ այն հայ կայսրներուն վրա, որոնք Բյուզանդիոնի գահը բարձրացան, խոսեցավ նաև այն դաշնակցության վրա զոր հայերը կրնան կալմել հունաց հետ երբ անկախ ըլլան¹: Բանախոսությունը տեց մեկ ու կես ժամ: Ամբողջ սրահը լեցուն էր Parnasse-ի անգամները, դասատուներ, զինվորականներ, խմբագիրներ, կիներ, օրիորդներ (գեղեցիկ), բժիշկներ, փաստաբաններ և ուսանողներ ներկա էին: Քանի մը անգամ ծափահարվեցավ և մեծ հաջողություն գտավ:

Հետեյալ օրը Սիլլոգոսի նախագահը իմացուց թե Տիգրան Երկաթ Բառնասի անդամ պիտի ընտրվի և իր ճառը հունարեն թարգմանվելով Բառնասի կողմեն հատուկ տիտղոսով պիտի հրատարակվի: Ահռուպոլիս և Էսթիա թերթերը սկսած են արդեն մաս առ մաս հրատարակել այդ բանախոսությունը:

Այս ամենուն վրա, եթե կարելի է բան մը գրե այդ տեղի թերթերուն մեջ²: Հոստեղի բոլոր թերթերը մեծամեծ գովեստներով խոսեցան իր մասին:

Արմենիայի³ մեջ կարդացի Պետոյի մասին գրածս, զոր թարգմանած էր ֆրանսական թերթ մը, բայց չէր հիշած թերթին անունը, ինչու ինձի հատ մը չղրկեցիր: Պետոն քանի մը օրեն պիտի մեկնի դեպի Մակեդոնիա:

Տիգրան Երկաթ կիրակի օրը պիտի մեկնի ասկե դեպի Մարսել, ուր նույնպես conférence մը տալու միտք ունի:

Երկու օրե ի վեր Սետրաքը⁴ հոս է: Շահնապարի⁵ մասին հույսեր կհայտնե. կերևա որ ֆրանսական դեսպանատունը շատ զորավոր կերպով կհետապնդե կոր գործը: Խեղճ Սետրաքը ինքն ալ բանտարկվել է քանի մը օր և քիչ մըն ալ ծեծ կերեր է: Բըր ձերբակալման և աղստման պատմությունը ճշմարիտ վեպ մըն է:

Ամենուդ շատ սեր. քոյդ՝ Երվանդ Սոյան

2.

Աթենք, 31 հոկտ., 1896 թ.

Սիրելի Արշակ

Այս անգամ քիչ մը ծուլություն ըրի նամակներուդ պատասխանելու համար, աս ալ կա որ երկու-երեք շաբաթե ի վեր իրարանցումի մեջ էի, հետզհետե Պոլսեն հասնող բարեկամներու պատճառով: Ղարիպյանեն⁶, որ անշուշտ հիմա Բարիկ հասած է մանրամասն ծանոթություններ առիք հարկավ մեր հոս

տեղի կյանքին վրա: Քեզի քանի մը նամակներ գրած եմ ասկե առաջ, սակայն ուղղած եմ ղանոթք քո հին հասցեիդ:

...Ինե կուղես Դուրյանի և Պեշիկթաշլյանի հատորները, սակայն, դժբախտաբար չպիտի կրնամ գտնել ու ղրկել քեզի, ասկե առաջ Դուրյան մը ձեռք անցուցի ժամանակի մը համար, բայց «Սև հողեր»-ուն թարգմանությունը⁷ լրացնելն ետքը վերադարձուցի տիրոջը, որ անընդհատ իր գիրքը կպահանջեր, միայն թե կրցի ընդօրինակել գրեթե բոլոր սիրային տաղերը և ուրիշ մեկ քանիները, ահավասիկ այդ տաղերուն խորագիրները. Իցի՛վ թե, Մանիշակ, Սիրեցի քեզ, Սիրել, Լճակ, Պետք է մեռնիլ, Կույսն լքյալ, Նայվածք մը, Դրժել, Զնե պաշտեմ, Սև-սև, Կոկոն ծաղիկ կուսին, Հեծեծմունք, Հծծյունք, Հուսք ճրտունջք, Իմ մահը, Ի՞նչ կըսեն, Իմ ցավը, այս տաղերեն որն որ կուղես և եթե կուղես ամենքն ալ, կըրնամ քեզ ղըրկել: Պոլսեն գիրք բերել տալը շատ դժվար խնդիր մըն է, մանավանդ որ հիմա ալ մարդ չմնաց գրեթե Պոլիս: Խեղճ Կունծիկ Աբեղան⁸, իմ միակ թղթակիցս, այն ալ հոս գալու համար շոգենավ մը տած միջոցին ձերբակալվեր է: Խեղճ տղա, վերջին ժամանակներս ալ իր հիվանդությունը շատ առաջ գացած է եղեր, եթե քիչ մը ատեն բանտը մնա, ապահովաբար հոն պիտի մեռնի: Այս միջոցիս Պոլսո մեջ «Հայրենիք»-ի խմբագիր և գործավոր կփնտրեն կոր եղեր ամեն կողմ, և կարծեմ Կունծիկին ամենեն մեծ հանցանքը մեր թերթին մեջ աշխատած ըլլալը պիտի նկատվի:

Եգիպտոս հայերեն թերթ մը հրատարակելու խորհուրդը շատ լավ կգտնիմ, արդեն ես հոս հասնելուն պես նամակ գրեցի Լևոն Մկրտչյանին⁹ և իր կարծիքը ուղեցի այդ մասին, ինքն ալ համամիտ գտնված էր, միայն թե խորհուրդ և տար մեկ երկու ամիս հետաձգելու: Կունծիկը անցած շաբթու գրած էր ինծի թե՝ Տիգրան Արփիարը¹⁰ Եգիպտոս գացեր է և հոն թերթ մը պիտի հրատարակե, արդյո՞ք այս հրատարակությունը հարաբերություն ունի քու գրածիդ հետ, կամ թե միշտ այդ թերթին խորհուրդը կտեվե, այս մասին տեղեկություն տուր ինծի, ես միշտ պատրաստ եմ Եգիպտոս երթալու:

En attendant հիմակ ու հիմա ես հոս արդեն սկսած եմ թերթի պես բան էր հրատարակելու... որուն մեկ թիվը արդեն Ղարիպյանին հետ ղրկեցի ձեզի: Տպարաննիս սակայն շատ խղճուկ բան է, 4—5 գիր կա, որ կպակսի. հիմա ապսպրած են այդ պակսած գիրերը և կհուսամ, որ քիչ ատենեն ավելի կանոնավոր կերպով պիտի կրնամ շարունակել հրատարակությունը: Անգամ մը որ տպարանը կարգի մտնե, միտք ունիմ թերթեն դուրս հրատարակություններ ընել, նախ Տիգրան Երկաթի բանախոսությունը հայերենի թարգմանելով պիտի հրատարակեմ, հետո հունական հեղափոխության մեկ պատմությունը մաս առ մաս և պատկերազարդ և հետո, գուցե գիրք մը, որուն մեջ պիտի հավաքեմ մեկ քանի տպավորություններ¹²:

Շիտակը շատ սիրեցի Աթենքը և Հունաստանը. ղվարթ, գեղեցիկ երկիր մըն է և շատ հեշտ է ապրիլ հոս: Այս եղանակին պատուհանը բաց կպարկիմ, սքանչելի երկինք ու պայծառ արև ունինք անընդհատ: Երեկ 15 հոգիի շափ հավաքվեցանք Հիմեթ լեռը ելլելու համար, հետերնիս միս, խաղող, պանիր, չինի և օղի առած, միայն թե ձամբուն ես ու հետս ընկեր մը մոլորվեցանք լեռներուն մեջ, մեր ընկերները բոլորովին կորսնցուցինք, և ժամերով քալելն ետքը վերջապես քաղաք հասանք, մինչդեռ մեր ընկերները կարող եղեր են ուշ ատեն մանաստր¹³ մը գտնիլ լեռան գլուխը և գիշերը հոն անցընել: Քանի մը օրեն դարձյալ մեկ քանի ընկերներով պիտի երթանք և այս անգամ միտքեր-

Նին դրած են մինչև բարձրագույն գազաթը ելլիլ: Հիմեթ՝ Ատտիկեի բարձր լեռներեն մին է և այդ բարձրութենեն տեսարանը հիանալի է եղեր: Եթե քիչ մը կարգի դնեմ գործս և ամսական 3—4 ոսկի հասույթ մը ունենամ հոսկե, այն ատեն շատ լավ կրնամ ապրիլ և ատեն ատեն պատիկ ճամբորդություններ ընել Հունաստանի և արշիպելագոսի մեջ: Հունական շոգենավերը և շոգեկառերը շատ ու շատ աժան են և գրեթե ոչինչ գնով կարելի է 15—16 ժամ հեռու տեղեր երթալ պտտիլ:

Հետևը¹⁴ ի՞նչ կրնե, ինչո՞ւ ինծի նամակ չգրեր բնավ, ահա ամիս մըն է գրեթե որ իրմե գիր չեմ առած: Նույնպես Արփիարեն¹⁵ լուր մը չունիմ, մանավանդ որ ես իրեն գրեցի և քանի մը բաներ հարցուցի, արդյոք միշտ կոնդոն է, հասցեն նո՞ւրն է:

Ղարիպյանը արդյոք ի՞նչ կրնե Բարիլի մեջ. անշուշտ հիմա զղջացած է Աթենք ավելի երկար չկենալուն համար, մանավանդ որ եթե հիմա հոս ըլլար, շատ աղեկ ժամանակ պիտի անցներ, որովհետե քիչ մը հարստացանք այս օրերս: Խեղճին հոս գտնված միջոցին շատ ողորմելի վիճակ ունեինք, եկավ, պատմեց ձեզի, ըսե իրեն, որ Պարույրը, Կարապետ աղան, Սահակը, Վահանը, Սևտրաքը¹⁶ ևն իրեն սիրով կրարենեն, ինչպես նաև ես, թող անմիջապես նամակ գրե ինծի, եթե արդեն չէ գրած:

Շատ համբույր ամենուդ. քոյդ՝ Երվանդ Օտյան:

Հ. Գ. Երեկ գիշեր մորուքս Կծիլել տվի, այլանդակ բան մը եղա:

Նույն:

3.

Շարափա¹⁷, 7 մայիս, 1897. ուրբաթ.

Սիրելի Արշակ

Conférance-դ¹⁸ ընդունեցի և անհանգստությամբ կարդացի. շատ ու շատ շնորհակալ եմ, որ դիս չես մոռցած: Օրերն ի վեր կուզեի գրել քեզի, բայց Հունաստանեն եկած լուրերը¹⁹ այնչափ ընկճեցին դիս, որ հավատա, բան մը գրելու կամ ընելու սիրտ չէր մնացեր վրաս...

Բանախոսությունդ կարդալն ետքը, երբ Գահիրե գացի, տեսա Ապահը²⁰, որ խոսեցավ ձեր վրա և պատմեց թե ներկա գտնվեր է բանախոսությանդ: Իրմե իմացա այդ առթիվ՝ ունեցած մեծ հաջողությունդ, որ դիս չափազանց ուրախացուց: Շատ լավ ըրած էիր ջարդերու վրա խոսք չընելով: Չես գիտեր ինչ կատաղություն կուզա վրաս, երբ ամեն անգամ կկարդամ «ոչխարի պես ջարդվող հայեր» խոսքերը և ալ կամաց-կամաց ջարդվողներն են, որ կսկսիմ ատել: Տետրակդ կարդալն ետքը հանձնեցի Պողոս փաշայնեց²¹, իրենց տունը տեսա Père Salvaor-ի վրա Աղասիի²² տետրակը, զոր նույնպես դուն թարգմանած ես և զոր չէիր դրկած ինծի: Անկեղծորեն կրնամ ըսել, որ մեր մեջեն ամենեն օգտակար գործը դուն կրնես կոր առտասահմանի մեջ:

Հետին²³ երկար նամակ մը գրած եմ երկու ամիս առաջ և դեռ պատասխան չառի, չեմ գիտեր ինչու: Արդյոք այնչափ դրաղած է, որ քանի մը տող չկրնար գրել ինծի, մինչդեռ Տիգրանին²⁴ հաճախ կզրե: Ըսե իրեն, որ անհամբեր նամակի կսպասիմ իրմե:

Կաղաչեմ, սիրելի Արշակ, եթե կարելի է, բացատրե ինձի թե ինչ է քու և Հրանտին²⁵ միջև եղած խնդիրը: Շատ ցավ կղգամ, երբ կիմանամ թե պաղու-
թյուն կա ձեր և Հրանտին միջև, իրեն գրեցի, բացատրություն ուղելու համար,
սակայն որոշ բան մը չգրեց: Այս անգամ Արփիարը գրած էր քիչ մը, բայց ոչ
պետք եղածին չափ հստակ: Ամեն պարագային վստահ եմ, որ Հրանտը տեղի
տված է որևէ միջադեպի մը:

Շատ սեր և համբույր: Գրե ինձի:

Քոյդ միշտ՝ Երվանդ Օտյան:

4.

Շարապաս, 27 յայիսի 1897 հինգշաբթի

Սիրելի Արշակ

Այս առտու առի նամակդ և անմիջապես կը պատասխանեմ. այնչափ կա-
րոտ կքաշեմ սրտիս մոտիկ մարդոց հետ տեսնվելու:

Կուզեմ քեզ գոհացնել երկարորեն խոսելով իմ վրա, իմ կյանքիս ու ծրա-
գիրներուս ու խորհուրդներուս վրա: Ահա մոտ շորս ամիս է, որ Տամիթի մո-
տերը ագարակի մը մեջ կգտնվիմ: Հանգիստ եմ հոս, ուտելիքս չեմ մտածեր,
աշխատությունս շատ չէ և կատարյալ հանդարտության մեջ կապրիմ: Ինձի
համար տուն մը ունիմ բոլորովին առանձին, երկու երեք սենյակով: Ես միայն
պառկելու խուց մը առած եմ և սուֆան²⁶, ուր կաշխատիմ, մյուս սենյակները
կղպած եմ:

Գիշերը տունս կքաշվիմ, դուռս կկղպեմ ու կպառկիմ, շորս կողմն մողես-
ներով, մուկերով, cafard-ներով²⁷ և երբեմն՝ օձերով շրջապատված: Առաջ
մեկը կար, պաշտոնյա մը, որուն քով pensionnaire էի և կերակուրս հոն կու-
տեի, այդ պաշտոնյան ուրիշ ագարակ մը փոխադրվեցավ, այն ատեն, երկու
շաբաթի չափ իմ կերակուրս ես եփեցի, հետո տեսա, որ անկարելի է այդպես
շարունակել և երբ Գահիրե կգտնվեի հանդիպեցա Աթենքի մեջ ծանոթացած
հայ բարեկամի մը, Փոքր արամնցի պատվելի²⁸ մը որ հրոսակախմբի մը մաս-
նակցած, հետո մահվան դատապարտված ու փախած էր: Գահիրե, հացա-
գործի մը քով կգտնվեի ու տկար էր, բժիշկը օդափոխության պատվիրած էր
իրեն, առաջարկեցի, որ գա կերակուրս եփե որով միանգամայն օդափոխու-
թյուն բրած կրլլա: Հավանեցավ և եկավ, այն պայմանով, որ առողջանալուն
պես վերադառնա: Տող ընդ մեջ ըսեմ, որ այդ պատվելին, որ հիմա հացագործ
է Գահիրեի հնչակյան մասնախումբին տնդամ է և գերադանցապես ազնիվ
մարդն է զոր ճանչցած եմ Պոլսեն մեկնելես ի վեր:

Այդ պատվելին եկավ և ես ուրախ էի, ինչպես Հիսուս, երբ Ղաղարոս
տեսավ: Թե խոհարար և թե ընկեր մը ունեի քովս: Ցերեկը կերակուր կեփեի և
իրիկունը իր հեղափոխականի հիշատակները²⁹ կգրեի: Եկուր տես, որ այս-
տեղի օդը շատ աղեկ եկավ իրեն և օրե օր սկսավ վրա դնել, մինչդեռ ես տխրու-
թյամբ և հուսահատությամբ կդիտեի այդ հսկայաքայլ ապաքինումը: Վերջա-
պես հնարք մը մտածեցի. գիտես որ Նեղոսի ջուրը առանց filtre րնելու, խմելը
շատ վտանգավոր է առողջության համար: Ես գաղտուկ Նեղոսի ջուր բերի և
առանց filtre րնելու լեցուցի փարչերու մեջ, հուսալով որ պատվելին ստա-
մոքսի հիվանդություն մը կրնա ունենալ ատկե և իր մեկնումը հետաձգել:
Հակառակ ջանքերուս, Նույնիսկ Նեղոսի ջուրը անօգուտ եղավ և պատվելին

քսան օր կենալն ետքը, ընդհատելով պես առողջ, ուղեց վերադառնալ Գահիրե և համակերպեցա ու միասին գոցեցինք Զակաղիկեն³⁰ անցնելով: Կհուսայի այս առթիվ Տիգրան Կամսարականը տեսնել, որ հոն կգտնվի, բայց Ալեքսանդրիա գացած էր: Վերադարձիս աղարակից մեկ ուրիշ պաշտոնյա առաջարկեց զիս ընդունել իբրև pensionnaire և ես երախտագիտությամբ հավնեցա, հիմա անոր տանը կճաշեմ և խոհանոցի ու լվացքի հոգսերեն ազատ եմ: Ինք Զվիցերիացի մըն է ամուսնացած՝ հայրենակից վարժուհիի մը հետ...

Ինչերը ընդհանրապես գրելով կանցնիմ, մինչև ժամը տասը, նախ նամակներ, հետո Միտիլան³¹ հոգված, որովհետև միշտ ես եմ խմբագրապետը և հետո տետրակ մը զոր լմնցնելու մոտ եմ և որուն մեջ պատմած եմ Պոլսեն մեկնելուս և Բիրեն հասնելուս վեցօրյա անցքերը և բավական հետաքրքրական է, նախ որ ջարդերու տեսարանները կուսն և հետո ուղևորությունս զրոշակյաններու հետ: Այս տետրակը կհուսամ թե հուլիսի վերջը կհրատարակվի³²: Ասոնցմե ղատ հիմա հոգվածներ կգրեմ նաև Փառոսի³³ որ շաբաթե մը ի վեր սկսավ հրատարակվել Գահիրեի մեջ, Ալփիարին ու Տիգրանին կողմե և որուն առաջին թիվը անշուշտ ստացար: Իսկ կարդալու շատ բան չունիմ, Աստվածաշունչեն ղատ, քանի մը երկրագործական գրքեր և Roman-ներ ունեն [հարե-վաններս], բայց երբ նորեն Գահիրե երթամ քանի մը լուրջ գիրքեր պիտի առնիմ: Տետրակիս հրատարակումեն ետքը եթե հոս, ազարակը մնամ, միտք ունիմ ավելի լուրջ աշխատության մը պարապելու, այսինքն ուսումնասիրություն մը ընելու—քրիստոնեություն և երեսն հայոց կրած վնասներուն վրա և ցույց տալու, թե՛ «եկեղեցին միշտ հիմա պահպանած է» ավանդական խոսքը, տերտերներուն կողմե հնարված կեղծ բանաձև մըն է³⁴:

Գալով Պոլիս դառնալու և Հայրենիք³⁵ վերսկսելու խորհրդին, ահա անկեղծորեն իմ կարծիքս:

Պետք չէ բնավ վստահիլ հայերուն մասին այժմ ցույց տրված թույլտվություն³⁶: Մինչև որ սուլթան Համիտը չսատկի ապահովություն չէ Պոլիս դառնալ և անկարելի է հոն օգտավոր գործ մը ընել: Ասկե ղատ շատ կկասկածեմ որ Շահնազար³⁷ կարենա կրկին Հայրենիքի հրատարակումին արտոնությունը առնել՝ եթե երբեք կաշխատի ատոր:

Գալով իմ վերադարձիս աս ալ մեծակախնդիր մըն է, նախ որ ծնողքս բուրդովին կհակառակեն և խրատ կուտան, որ դուրսը մնամ, ասկե ղատ, ահա ինչ որ կգրե ինծի Շահնազարը, մարտ 20 թվականով. «Պոլիս գտնված ատենս Արթին³⁸ փաշային գացի և խոսեցա քո վերադարձիդ վրա, սուրբի մը հոտը չես բուրբեր հոն, բայց բսի սուս մարգարե մը չէ և ոչ ալ պատիկ սատանա մը: Այս շահեկան խոսակցության վրա մարդ եկավ և այլն»: Բյուզանդիոնի³⁹ մեջ միայն հույներուն դեմ հարձակելու և ծաղրելու ազատությունը կտեսնամ կոր և ասիկա բավական չէ կարծեմ Հայրենիք հրատարակելու համար: Վստահ եղիր, որ ամենափոքր առիթ մը բավական պիտի ըլլա կրկնել տալու բանտարկությունները, տանջանքները, ջարդերը և այդ առիթն ալ ուշ կամ կանուխ պիտի գա և դուք որ OTTOMAN ևղած ջարդ մը շտեպեք, չեք գիտեր թե ինչ բան է ատիկա: Ինչ երևակայությանս առջևն է Շահնազարը երեք շորս կոշտ գին-վորներու հսկողությամբ կենտրոնական բունտն ուստիկանատուն դալը և խումբ մը ստորին արարածներու քով հարցաքննվիլը:

Եթե Հայրենիք հրատարակվի իսկ, կամ այն է, որ Բյուզանդիոնի ուղղու-թյունը պիտի բռնե, կամ ամիս մը ետքը նորեն պիտի ջնջվի և երկու պարա-

գային մեջ որևէ օգտակարություն չկրնար ունենալ: Իսկ գերմանական ազդեցությունը⁴⁰ երազ մըն է, որ Արփիարի պես համառ լավատեսները կրնան միայն ունենալ: Եգիպտոսի մեջ իսկ մահմեդականները թրքական հաղթանակներեն գինովցած՝ քրիստոնյաներու դեմ ցույցեր ընել սկսան, ո՛ւր մնաց Տաճկաստանի մեջ...

Սիրելի Արշակ, ես բնավ դիտավորություն կամ փափաք չունիմ Պոլիս դառնալու, մինչև որ հիմնական փոփոխություն մը չըլլա և կխրատեմ ձեզ ամենքդ որ ինձի պես ընեք:

Ասիկա Poltronerie⁴¹ չէ, այլ էշնահատակ չըլլալու միջոց մը:

Գալով ինձի, ճշմարիտ ըսելու համար, միտք չունիմ կյանքս Շարապասի ագարակին մեջ անցնելու և եթե լավագույն բան մը չգտնամ ընելիք, կամ նորեն Աթենք պիտի վերադառնամ և շենք շնորհք Միությունը շարունակեմ, կամ Պուլկարիա պիտի երթամ ուր զիս իբրև դասատու ուղած էին արդեն Աթենք գտնված միջոցիս, սակայն ամեն պարագային կուղեմ պղտիկ economie մը ընել հոս և անկե ետքը ճամփա ելլել:

Խարիպյանեն⁴² ի՞նչ լուր, միշտ Բարիդ է և ի՞նչ կրնե: Շատոնց է լուր չունիմ իրմե, կարծեմ վերջին նամակին չպատասխանեցի և ինքն ալ անկե ետքը չգրեց: Եթե հոգ է և եթե կտեսնաս զինքը, ըսե որ կամ թող գրե ինձի, նորեն, կամ հասցեն տա որպեսզի ես գրեմ:

Իսկ Լեոնին⁴³ ընթացքին համար այնչափ բարկացած եմ որ լավ կըլլա իր վրա շխոսինք: Կարծեմ ավելի լավագույն կերպով վրեժ չէի կրնար առնել բան Խարիպյանը իրմե առաջ հիշելով:

Շատ սեր և համբույր. քոյդ՝ Երվանդ Օտյան

5.

Շարապաս, 2 նոյեմբերի 1897 թ.

Սիրելի Արշակ

Սողոմոնն իր առականերուն մեջ կըսե թե չորս բան կա, որ հերիք է չեն ըսեր. գերեզմանը, ամուլ արգանդը, երկիրը որ ջրով չկշտանար ու կրակը՝ որ հերիք է չըսեր: Սողոմոնն իր իմաստության մեջ, մոռցած է Արփիարը⁴⁴, որ հերիք է չըսեր՝ որչափ ալ ուտելիք տաս իրեն: Հինգ օրե ի վեր ամբողջ ագարակներու հաշիվները մեկ կողմ թողած՝ թևերս սոթտած, խոհանոցեն դուրս ելած չունիմ. օրը վեց անգամ ճաշ կպատրաստեմ Արփիարին և նորեն չկշտանար ու նորեն «տուր», «տուր» կգոչե: Եվ ինչպես չհիշեմ ես ալ նորեն Սողոմոնը, որ կգրե — «տղրուկը երկու աղջիկ ունի, տո՛ւր, տո՛ւր կըսեն ու չեն հագենար»:

Վերջապես այս ամենակուլին ձեռքեն ազատելու համար փիլաֆ մը եփեցի այնչափ գեշ պատրաստած, որ կերած օրը ստամոքսի խանգարում մը ունեցավ և անկե ի վեր խեղճը թեյեն ու կաթեն զատ բան մը չկրնար կոր խմել:

Հիմա անցնենք Արփիարեն ավելի լուրջ խնդրի մը:

Վերջին նամակիդ եթե անմիջապես չպատասխանեցի, պատճառը այն էր, որ Բարիդեն մեկնելից իմացած էի և նոր հասցեդ չէի գիտեր: Ինձի գրած էիր Օտյանի⁴⁵ կենսագրությունը պատրաստելու մասին. նախ՝ սա ըսեմ որ Լեոնն որևէ գիր մը չեմ առած և ասկե զատ ես ամենեն անհարմար մարդն եմ այդ

կենսագրությունը գրելու համար. ասիկա ոչ թե միայն իմ կարծիքս է, այլ նաև Արփիարիներ: Ինչ որ կրնայի գրել հորարիս վրա գրած եմ «Մասիսի» մեջ: Այն կենսագրությունը զոր կառաջարկես ինծի քննադատական մը պիտի ըլլա, որուն մեջ գեշ կամ աղեկ դատաստան մը պետք է ընեմ ենթակային վրա. արդ. այս բանը ոչ կուզեմ, ոչ ալ հարմար է, որ ընեմ հորարիս վրա: Ինծի համար ավելի պատշաճ կնկատեմ նուպար փաշայի կենսագրությունը գրել, որուն մասին կրնամ հոս շատ տեղեկություններ հավաքել և ավելի անկաշկանդ կերպով գրել: Մական կարծեմ ասոր ալ ղեռ ժամանակը չէ:

Իրրև գրական աշխատանք առայժմ արյունոտ հիշատակս⁴⁶ ունիմ, որուն առաջին մասը Արփիարեն հավանության արժանացավ, ասկե դատ միտք ունիմ զեկտեմբերի վերջերը բանախոսություն մը ընել Դահիբեի ընթերցասիրաց լսարանին մեջ «Ժողովողի»⁴⁷ գրքին վրա: Դալով իմ ներքին կյանքիս՝ միշտ նույն միօրինակությունն է, որ կշարունակվի ալ ձանձրալի ըլլալու շափ: Այս օրերս, անշուշտ, ամենեն հաճելի օրերն են ինծի համար քանի որ Արփիարը քովս է, բայց իր մեկնելեն ետքը անձկությունս շատ ավելի դժնդակ պիտի ըլլա:

Շարապասի մեջ Արփիարը ունենալ տարօրինակ luxe մըն էր ինծի համար:

Շատ սեր և համբույր. քոյդ՝ նովանդ Սոյան

6.

Գարապաս, 16 սեպտեմբերի, 1898 թ.
(Farascour)

Սիրելի Արշակ

Եթե ոչ Անահիտը, ապահովապես նամակդ surprise մը եղավ ինծի համար. ա՛լ այն աստիճան հուսահատած էի քնեն: Գշնորհավորեմ և հաջողություն կմաղթեմ ծնելիք հանդեսին⁴⁸ համար:

Անահիտի մեջ գրելու հրավերդ սիրով կընդունիմ և պիտի ջանամ նույնիսկ առաջին թիվին համար բան մը հասցնել: Մտածեցի, որ նամակի ձև տամ հողվածներու և ընդհանուր վերնագրի մը տակ գրեմ միշտ. այս կերպով կրնամ ուղած նյութիս վրա, ուղած ոճովս գրել: Առաջին հողվածս զոր մտադիր եմ գրելու կրնա իրրև ներածություն մը նկատվել...

«Նոր կյանքի» մեջ կարդացի որ հողված մը հրատարակեր ևս Revue Encyclopédique-ին⁴⁹ մեջ: Շատ կաղաչեմ զրկե ինծի այդ թիվը, շմոռանաս: Շատ սեր և համբույր, զրե ինծի նորեն:

Քոյդ միշտ՝ նովանդ Սոյան

7.

Շարապաս, 5 հոկտեմբերի, 1898 թ.

Սիրելի Արշակ

Վերջին նամակդ երբ առի, ոչ միայն հողվածս արդեն չէի զրկած՝ այլ նույնիսկ չէի գրած թեև գրելիքս մտքիս մեջ որոշած էի: Մեկ հանգիստ ժամանակիս կսպասեի կոր ուղածիս պես ընդլայնելու համար: Այդ ժամանակը չեկավ, որովհետև այս միջոցին ամենից շատ զբաղում ունեցած ատենս է բամբակի հունձքին պատճառով... Revue Encyclopédique-ները ստացա. շատ շնորհակալ եմ. պետք կա՞ ըսելու որ գրածդ կատարյալ բան մըն էր: Ինչու

համար սակայն աշուղներուն վրա քիչ մը ավելի չէիր խոսած ու հատվածներ թարգմանած. մանավանդ չէի՞ր կրնար թարգմանել այս առթիվ պանդուխտին հրգը՝ «Կռունկ ուստի՞ կուգաս» հայոց միակ ժողովրդական երգը:

Հոգվածս⁵⁰ թեև կրնայի ավելի ընդարձակ կերպով գրել, ինչպես արդեն մտադրված էի, սակայն որովհետև ուշ մնացի ու դեռ չեմ գիտեր թե հանդեսի ծավալը ինչ է, ավելի հարմար դատեցի կարճ գրել: Կիսնդրեմ եթե ժամանակին հասնի և տպագրվի ուշադրություն ընես փորձերը նայած միջոցիդ երբայակա՜ն բառերուն: Ընդհանուր խորագիրը՝ «Անապատեն ձայն» շատ աղեկ շերեար կոր ինծի, եթե լավագույն բան մը գտնես, փոխե: Գրածիդ նայելով՝ կսպասես որ հոգվածս քիչ մը ժպիտ բերե, հուսախաբ պիտի ըլլաս:

Գրած միջոցիս բառ գտնելու համար սոսկալի նեղություն կկրեմ կոր, կուզեի Հայկազյան առձևոն բառարան մը ունենալ, եթե Մխիթարյաններու դրացուցակը ունիս ղրկե ինծի, որպեսզի բերել տամ, ինչպես նաև ուրիշ մեկ քանի դիրքեր:

Արփիարին կսպասեմ կոր անհամբեր: Գուցե երեկ եկավ արդեն Ալեքսանդրիա: Այս իրիկուն կիմանամ:

Շատ սեր և համբույր. քոյդ՝ Նովանդ Օտյան:

Տ.

Հոնտոն, 30 դեկտեմբերի 1899 թ.

21 St Mary's Road, Bayswater

Սիրելի Արշակ

Նոր տարվան սեմաց վրա կանգուն [մեջքս] անցյալին ու առաջոյքս ապագային դարձուցած, անդրանիկ ողջոյնս կթռցնեմ առ քեզ, ո՞վ սիրելի Արշակ: Ի՞նչ այս ողջոյնս պատեն Հոնտոնի մառախլապատ կամարը, վերագույն սփյուռներու մեջ հողաթևե ու արևուն ոսկեշող ճառագայթներուն մեջ իր մերկությունը լվալե ետքը, իջնա քու խցիկդ ու իր փաղփաղուն ձայնովն ու հեշտարույր շունչովը թող լեցնե՜ գայն և իր եթերային հողաթև ծղիներուն մեջ առած գլուխդ գերազրգիռ, համբույրներու տարափի մը մեջ թող մնջե՜ ականջիդ. «շնորհավո՛ր նսր տարի»:

Շիտակը հանցավոր կզգամ ինքզինքնիս վերջին նամակդ այսչափ ատեն յառանց պատասխանի ձգելուս համար, բայց ի՞նչ ընեմ, գրելու մասին տեսակ մը ծուլություն եկած է վրաս, դոր չեմ կրնար կոր թոթափել: Նամակս ուշացնելու մեկ պատճառն էլ այն էր, որ անպատճառ կփափագեի նամակիս հետ հոգված մըն ալ ղրկել, սակայն, ահա նորեն չկրցա:

Այս օրերս խենթի պես անգլերեն սորվելու տված եմ ինքզինքս և եթե Արփիարն ու Հեոնը⁵¹ ետեևս չիյնան (մանավանդ գրաշարը) Նուր Կյանքին ալ բան մը չպիտի գրեմ: Այսուհանդերձ առնական որոշում մը տվի, այն է 1900 են սկսած կյանքս կանոնավորել, օրվան մեջ վայրկյան մը չկորսնցնել, առտուն կանուխ ելնել ու մինչև կեսօր գրել և այլն. վստահ եմ ուրեմն որ այս անգամ անպատեհառ, մինչև հունվար 15 քեզ հոգված⁵² մը կգրեմ որ փետրվարի Անահիտին մեջ կրնա երևալ:

Շատ գոհ և ուրախ եղանք ամենքս conférence-ներուդ⁵³ հաջողությանը համար: Այս ընդհանուր անգործունեության մեջ, նորեն օգտակարագույն բանն

է որ կրնես կոր: Անշուշտ անկեց ի վեր ուրիշներ ալ տեղի ունեցան. չեմ դիտեր թե այս նամակս ալ քեզ Բարիդ պիտի դտնե՞:

Լոնտոնի կյանքը կսկսի կոր շատ միօրինակ երեւալ ինծի. իսկ օդը, սոսկալի բան, գալես ի վեր, համբեցի, ճիշտ հինգ անգամ միայն արե տեսանք, ան ալ աստված արե ընե: Եզիպտոսի լուսինը անկե փայլուն է: Իսկ Ֆալեո անտառնելի. չեմ գիտեր թե Լոնտոն եկած ես ու մշուշի պատահած: Յարճանյանի⁵⁴ ամբողջ մակրայները, ահեկիորեն, սոսկալիորեն, տեղունորեն և այլն, և այլն, բիչ են այդ մշուշին համար:

Ես պարզապես դուրս չեմ ելլար օրերով, այդ մշուշին հետ կովի չրոնվելու համար:

Ընդհանրապես ժամանակս կաշնցնիմ Լեոնին հետ⁵⁵, կամ անոր սենյակը, նույնիսկ իրեն հոն չեղած ատեն: Գիշերը մինչև 11 միասին կնստինք, հետո ես կգնամ իմ տունս պառկելու, միայն, ժամանակե մը ի վեր շաբաթ գիշերները, գործավորաց և ուսանողաց միության երեկույթներուն կերթանք⁵⁶. Լեոնը և ես մեյմեկ բանախոսություն ըրինք: Անցած շաբաթ նոր ընտրություն կատարվեցավ ու Լեոնն ու զիս գործադիր ժողովի անդամ ընտրեցին: Գեշ չէ, բավական կանոնավոր բան մըն է, մանավանդ անդամներուն տրամադրության տակ եղած սրահները շատ շնորհքով են և Բարիդի ուսանողաց ակումբին ծակերուն չեն նմանիր: Ասկե դատ տեղի երեկույթներուն շատ ավելի բազմություն կըլլա կոր և կիներ ու օրիորդներ ալ կգտնվին կոր, որոնցմե ոմանք նույնիսկ սիրուն լլլալու աստիճան աղնիվ կգտնվին կոր: Իրաց այս վիճակին մեջ շատ զարմանալի չպիտի գտնեմ եթե էրոս վիրավորե Զերօտ⁵⁷: Ճակատագրային բան մըն է այս սիրելի Արշակ, պետք է որ ես վիրավորվիմ էրոսի նետերեն, վերքը սպիանա, ու ահա հաղիվ թե սպիացած, նոր նետ մը գա միսվի սպիին մեջ ու վերքը նորեն բացվի: Այսպես եղավ անցյալ տարվան և այսպես պիտի ըլլա նաև նոր տարվան մեջ:

Քենե բան մը պիտի խնդրեմ և հուսամ, որ չես մոռնար կատարելու: Քու սենյակդ ձգած մեկ քանի ծրարներուս մեջ, պլլված թուղթ մը կա, որ չվանով մըն ալ կապած է, և կպարունակե Տիգրան Երկաթին խոսած ճառը Աթենքի մեջ, կխնդրեմ անմիջապես, եթե կարելի է, ղրկե ինծի իմ հասցեիս, որովհետև նոր կյանքին մեջ անոր մեկ մասը պիտի թարգմանեմ⁵⁸: Անշուշտ իմացար մեր խեղճ բարեկամին մահը, իր մասին բան մը գրեցի հունվարի 1 թիվին մեջ և մասնավորապես հիշեցի Աթենքի բանախոսությունը, հետեաբար կուզեմ հաջորդ թիվին մեջ մաս մը բան հրահարակել անկե:

...Կհուսամ թե փետրվարին կամ առ առավել մարտին Բարիդ կըլլամ:

Բարեկամներուն բոլոր շնորհավոր նոր տարի և բարի կաղանդ մաղթե իմ կողմանե՝ մասնավորաբար Վահեին⁵⁹, Մագսուտին⁶⁰, Մանվելյանին⁶¹, Գարկաշյանին, տոքթ. Քոլոլյանին⁶², օր. Հովհաննեսյանին⁶³, Սվաճյանին⁶⁴ ու Եսայանին⁶⁵:

Իսկ քեզի ծովու ավազի ու երկնքի աստղերուն շափ համբույր (տուր անոնցմե մեկ քանին ալ վերը հիշված մեր բարեկամներուն՝ որուն ճակատին, որուն բերանին, որուն այտերուն, որուն մորուքին):

Քույր միշտ՝ Երվանդ Ոսյան

9.

Կ. Պոլիս, 23 հունվ. 1919 թիվ.

Սիրելի Արշակ

Ողջ եմ, երեքուկես տարվան ահռելի, աներևակայելի ողիսականե մր ետքը՝ Մինչև Տեր-Ջորի ավելի վար, Միջագետքի անապատը, էլ պուսերա քշվեցա, Եփրատի ու Քոբուրի մեջտեղը, հո՛ն ուր Եզեկիել իր տեսիլները ունեցավ։ Չեմ գիտեր, թե պիտի կրնամ պետք եղածին պես պատմել տեսածներս, բայց պիտի փորձեմ։ Ընդհարձակ աշխատություն մը պիտի ըլլա ասիկա, թերևս մեկ քանի հատոր՝։ Հուսամ որ դուն աղեկ հանգիստ ես. հոս գրական հրապարակին վրա ամայությունն է որ կտիրե կամ ավելի գեշ բան մը, մեռելություն։ Գերեզմանապահի զգայնությունը ունիմ։

Սիրելի Արշակ, այս նամակը կգրեմ բան մը խնդրելու համար։ Ժամանակի⁶⁸ արտոնատերը կուղե որ թղթակից մը ունենանք Բարիզ որ մեղ օրը օրին տեղեկագրե մեղի համար ինչ շահեկան բան որ տեղի ունենա ու միևնույն ատեն էնթերվիոներ դրկե մեղի մոտ գտնվող ծանոթ աղգայիններու հետ։ Չեմ համարձակիր այս ծառայությունը քենե խնդրել, որովհետև կենթադրեմ, որ ժամանակ չունիս, բայց գոնե մեղի հարմար մեկը ճարե։ Դոշունյան տրամադիր է ամեն մեկ թղթակցության համար 40—50 ֆրանկ վճարել...

Կկարծե՞ս որ իմ Բարիզ գալս կրնա օգտակարություն մը ունենալ։ Ինծի այս մասին առաջարկություններ եղան, բայց կմտածիմ որ ալ ուշ է։ Ամեն պարագային կուղեի քու կարծիքդ իմանալ։

...Սիրալիր համբույրներ քեղի ու բոլոր բարեկամներուն։ Վահան Թեքեյանը եկա՞վ արդյոք։ Լսեցի, որ Եգիպտոսի մեջ դաշնակցականները դինքը աչքեն չլիրավորել են. շատ ցավ զգացի։

Քոյդ միշտ երվանդ Օտյա՜ն

Մ Ա Ն Ո Ւ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Տիգրան Երկաթը, որ գրում էր ֆրանսերեն, իր «Հույները և հայերը» դասախոսության մեջ հանգամանորեն կանգ է առել կրոնական խնդրի վրա, ցույց է տվել, որ հայկական լուսավորչական եկեղեցու և հունական եկեղեցու միջև էական տարբերություններ չկան և որ «մեր երկու ազգերը համանման շահեր, սովորություններ ու հղացումներ ունենալով, իրենց ազգային եկեղեցիները պետք է որ զիրար փոխադարձաբար ճանչնան, ինչպես որ եղավ միջին դարում»:

Դասախոսությունը Տ. Երկաթը վերջացնում է հետևյալ խոսքերով. «Դուք ալ, մենք ալ այսօր շատ հստակ կերպով կտեսնենք մեր երկու ազգերուն բնական շփման կետերը... Մեր քաղաքական ու կրոնական անցյալ բաժանումները մեզի որևէ ցավի զգացում ներշնչելու չեն: Ընդհակառակն, մեզ երջանիկ համարելու ենք, որ կրնանք մեր բոնեկիք արդի ընթացքին համար այսքան համոզիչ դասերն օգտվիլ»:

2. Զուպանյանը Տիգրան Երկաթի այդ դասախոսությանը անդրադարձավ նրա մահվան առթիվ գրած հոդվածում (տե՛ս «Անահիտ», 1899, 1—2, «Տիգրան Երկաթը»): Տիգրան Երկաթը տառապում էր թոքախտով և մահացավ խիստ վաղաժամ՝ 1899 թ.: Զուպանյանը հիշյալ հոդվածում տալով նրա՝ իրեն վերին աստիճանի ազնիվ ու տաղանդավոր մի հայ գործչի բնութագիրը, ավելացնում է. «Այդ շատ ազնիվ ու շատ մաքուր նկարագիրը ամբողջ ազգային գործունեություն մը ունեցավ, կարճատև բայց բարձրորեն գեղեցիկ ու տեսական: ...Աթենացիներուն առջև Երկաթ արտասանեց նշանավոր ատենաբանություն մը, ուր հելլենին ու հայուն զուգակշիռը կներկայացներ ամենամեծ «թաքթով», թափանցողությամբ ու ճարտարությամբ»: Փարիզի «Ռեվյու դե Ռեվյու» հանդեսում Տ. Երկաթը Հունաստանի, նրա գրականության մասին հրատարակեց մի քանի ուշագրավ հոդվածներ, որոնց համար Աթենքի քաղաքապետությունը նրան տվեց «Աթենքի քաղաքացի» տիտղոսը:

3. «Արմենիա» — շաբաթաթերթ ազգային քաղաքական և այլն: Տնօրեն խմբագիրն էր Մկրտիչ Փորթուզալյանը: Լույս է տեսել 1885—1923 թթ.: Օտյանի ակնարկը, ազգային գործիչ Պետոյի վերաբերյալ, մենք չկարողացանք գտնել՝ մեր գրադարաններում Արմենիայի հավաքածուն չլինելու պատճառով:

4. Սեդրակ Ամպարյան — պոլսահայ մտավորական, Օտյանի ընկերներից. նրա մասին խոսվում է «Տասներկու տարի Պոլսեն դուրս»-ում:

5. Հովհաննես Շահնազար — Պոլսի «Հայրենիք» թերթի արտոնատեր-տնօրենը, «Հայրենիք»-ի խումբը տարագրվելուց հետո (Ա. Արփիարյան, Լ. Բաշալյան, Ե. Օտյան և ուրիշներ) Պոլսում մնացել էր միայն Շահնազարը և ձերբակալվել էր:

6. Ղարիպյան — Օտյանի Աթենքի ընկերներից, որը տեղափոխվել էր Փարիզ:

7. Օտյանը դեռ Պոլսում եղած ժամանակ զբաղվել է Պ. Դուրյանով, որ նրա սիրած բանաստեղծներից էր: «Հայրենիք»-ում նա խիստ քննադատության ենթարկեց Ի. Էքսերճյանի գրած Դուրյանի կենսագրությունը: Ինչպես երևում է այս նամակից, տարագրության մեջ, Աթենքում ևս չի կարողացել մնալ առանց Դուրյանի: Օտյանի այս նամակից երևում է նաև, որ Զուպանյանը այդ ժամանակից արդեն ուսումնասիրում էր Պեշիկթաշլյանին: Մեզ հասել է նրա մի նամակը ուղղված Եվփիմե Օտյանին (Երվանդի հորաքույրը), որի մեջ Զուպանյանը խնդրում է իրեն տեղեկություններ հաղորդել Պեշիկթաշլյանի մասին: Վերջինիս վերաբերյալ Զուպանյանի ուսումնասիրությունը լույս տեսավ 1907 թ. Փարիզում: Իսկ Դուրյանի մասին նա 1894 թ. Խիֆլիսում արդեն հրատարակել էր մի գրքույկ («Կենսագրական և քննադատական ուսումնասիրություն»):

8. Կունծիկ Արեղա — մականունն է «Հայրենիք»-ի աշխատակիցներից մեկի (իսկական անունն է Բարթուղ Շահրիկյան), որ գրում էր կրոնական խնդիրների մասին: Մեռավ թոքախտից, 1897 թ., Եգիպտոսում:

9. Լևոն Մկրտչյան — «Հայրենիք»-ի նախկին աշխատակիցներից. 1896 թ. դեպքերից առաջ նա տեղափոխվել էր Եգիպտոս, ակտիվ մասնակցություն ուներ Եգիպտահայ հրատարակություններին:

10. Տե՛ս № 33 ծանոթագրությունը:

11. Տե՛ս № 31 ծանոթագրությունը:
12. Օտյանի այդ ծրագրերից ոչ մեկն էլ չի իրագործվել:
13. Մանաստր— վանք:
14. Լևոն Բաշալյան:
15. Արփիար Արփիարյան— այդ ժամանակ գտնվում էր Լոնդոնում՝ իրրև հնչակյան կենտրոնի անդամ:
16. Օտյանի՝ Աթենքի ծանոթներից ու ընկերներից:
17. 1897 թ. սկզբից Օտյանը հաշվապահի պաշտոնով աշխատում էր Պողոս Նուպար փաշայի ազարակներից մեկում, որը գտնվում էր արաբական Շարապաս դյուղի մոտ, «Տամիեոի մոտերքը», Կահիրեից ու Ալեքսանդրիայից 7—8 ժամ հեռու:
18. «Conferance-ի ընդունեցի»... Խոսքը վերաբերում է Արշակ Զոպանյանի հրապարակային դասախոսությանը, որ տեղի ունեցավ Փարիզի աշխարհագրական ընկերության դահլիճում, 1897 թ. մարտի 9-ին, Անատոլ Ֆրանսի նախագահությամբ: Դա Զոպանյանի առաջին հրապարակային ելույթն էր Փարիզում՝ հայկական հարցի վերաբերյալ, որը մեծ տպավորություն առաջ բերեց թե՛ Ֆրանսիայում և թե՛ Ֆրանսիայի սահմաններից դուրս: Դասախոսությունը լույս տեսավ ֆրանսերեն՝ Անատոլ Ֆրանսի ներածականով (L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient, par A. Tchobanian. avec une introduction par A. Franse): Այն շուտով թարգմանվեց նաև ռուսերեն, հունգարերեն, լեհերեն և այլ լեզուներով: «Սուր կյանք»-ը 1898 թ. լրիվ հրատարակեց այդ դասախոսությունը՝ «Հայաստան, իր պատմությունը, իր գրականությունը, իր դերը Արևելքի մեջ» խորագրով (տե՛ս նույն տեղում, էջ 166, 179, 194, 212, 228): Զոպանյանը դասախոսության առանձին հրատարակությունից (ֆրանսերեն) մի օրինակ ուղարկել էր Օտյանին. նամակի մեջ խոսքը դրան է վերաբերում: Զոպանյանը իրեն նպատակ չէր դրել եվրոպացիների կարեկցանքը շարժել. այլ ուզում էր հայ ժողովրդի արժանիքները, նրա կատարած դերը ցույց տալով դրդել նրանց կատարելու իրենց մարդասիրական պարտքը: «Կուզեմ ըսել չէ թե հայ ժողովրդին ինչպես տառապելը, այլ այդ ժողովրդին ինչպես ըլլալը»— գրում է Զոպանյանը: Հենց դա էլ գնահատում է Օտյանը Զոպանյանի դասախոսության մեջ:
19. «Հունաստանեն եկած լուրերը...»— խոսքը վերաբերում է Կրետեի ապստամբության անհաջողություններին:
20. Զեյթունի հերոսներից:
21. Խոսքը վերաբերում է Պողոս Նուպար փաշայի զերգուստանին:
22. Աղասի— Զեյթունի հերոսներից, որին հովանավորում էր Պողոս Նուպար փաշան. վերջինիս օգնությամբ ֆրանսերեն լույս էր տեսել Աղասու գիրքը Զեյթունի վերաբերյալ (Pere Saivator— Հայոց Սալվատորը):
23. Լևոն Բաշալյան, որը այդ ժամանակ գտնվում էր Փարիզում:
24. Տիգրան Արփիարյան. Արփիարի մեծ եղբայրը, որը նույնպես տարագրվել էր և այդ ժամանակ գտնվում էր Կահիրեում:
25. Հրանտը Օտյանի եղբայրն էր, որը մինչև 1895—1896 թթ. հորել էր հնչակյան կուսակցությանը և ակտիվ գործունեություն ունեցել, հետո տարագրվեց, անցավ Փարիզ, Հնդկաստան և հեռացավ քաղաքական գործունեության ասպարեզից:
26. Սուֆահ— քաղաք:
27. Cafard— խավարասեր (միջատ):
28. Արտմնցի պատվելին— Նշան Քեչիշյանն է, որի մասին Օտյանը հանգամանորեն խոսում է իր հիշողությունների մեջ (IV, 127):
29. Այդ հիշողությունները Ն. Քեչիշյանի մահից հետո Արփիարյանի խմբագրությամբ լույս են տեսել Լոնդոնի «Նոր կյանք»-ում, «Ժամանակակից պատմության էջեր— Հրոսակի մը հիշատակներեն» վերնագրով (տե՛ս 1899, էջ 2, 20, 54, 74, 89, 104, 140, 154):
30. Զակազիկ— Եգիպտոսի քաղաքներից մեկը, ուր Կամսարյան եղբայրները ծխախոտի գործարան ունեին:
31. «Միություն» ամսաթերթ, լույս է տեսել Աթենքում, 1896 թ. Թեթեոս Մուրադյանի խմբագրությամբ: Նույն թվականի օգոստոսից մինչև 1898 թ. խմբագրել է Օտյանը: Տե՛ս էլ մինչև 1901 թ.:
32. Ակնարկած տետրակը նրա «Արյունոտ հիշատակներ»-ն է: Տե՛ս № 46 ծանոթագրությունը:

33. «Փարոս» — եռօրյա լրագիր, 1896 թ. լույս է տեսել Կահիրեում և ընդհատումով շարունակվել մինչև 1902 թ.: համադիր-տնօրեններն էին երգիծաբան Հ. Ալփիարը և հրապարակախոս Տիգրան Արփիարյանը, Ա. Արփիարյանի եղբայրը:

34. Այդպիսի աշխատություն Օտյանը չի գրել, բայց հետագայում բազմաթիվ հակակրոնական հոդվածներ է գրել:

35. Խոսքը վերաբերում է Պոլսի «Հայրենիք»-ի վերահրատարակությանը: 1890 թ. թերթի արտոնատերը Հովհաննես Շահնազարն էր, իսկ խմբագրապետը Ա. Արփիարյանը: 1896 թ. մի քանի ամիս թերթը լույս է տեսել Օտյանի խմբագրությամբ և ապա արգելվել է: «Հայրենիք»-ի վերահրատարակումը Օտյանի մասնակցությամբ տեղի ունեցավ միայն 1909 թ.:

36. 1896 թ. ջարդից հետո միառժամանակ Պոլսում խաղաղություն էր տիրում:

37. Այդ արտոնությունը Հ. Շահնազարը ձեռք բերեց միայն 1901 թ.:

38. Արթին փաշա — Հարություն Տատյան, արտաքին գործերի խորհրդական Համիդի արքունիքում:

39. Պահպանողական օրաթերթ. լույս է տեսել 1896—1918 թթ. Բյուզանդ Քեչյանի խմբագրությամբ:

40. 1896 թ. հետո Թուրքիայի վրա ուժեղացավ գերմանական ազդեցությունը. շատերը կարծում էին, որ դա պիտի նպաստեր հայկական հարցի լուծմանը: Դա, Օտյանի կարծիքով, երազ էր:

41. Poltronerie — վախկոտություն:

42. Օտյանի ընկերներից Փարիզում:

43. Խոսքը Լևոն Բաշալյանի մասին է:

44. Խոսքը վերաբերում է Արփիար Արփիարյանին, որը այդ ժամանակ իբրև հյուր գտնվում էր Օտյանի մոտ, «ներա» ազարակում: Սողոմոնից արված մեջբերումները տե՛ս Գիրք առական, գլ. 15—16:

45. Խոսքը Գրիգոր Օտյանի՝ Երվանդի մեծ հորեղբոր մասին է: Երվանդը 1893 թ. գրել է «Գրիգոր Օտյանի ներքին կյանքը» (տե՛ս «Մասիս», 1893, 13 ապր.) ընդարձակ ակնարկը: Նա թեև Նուպար փաշայի կենսագրությունը չի գրել, բայց այդ ուղղությամբ զգալի աշխատանք է կատարել: Իր «Տասներկու տարի Պոլսեն դուրս» հուշագրության վերջին մասում («Եգիպտահայ երևելիները») մի ընդարձակ գլուխ է հատկացրել նաև Նուպար փաշային, որի դերը շատ մեծ է եղել Եգիպտոսի քաղաքական-տնտեսական կյանքում: Օտյանը Նուպար փաշայի գործունեությանը անդրադարձավ նաև 1913 թ. Պոլսում հրատարակած՝ «Պողոս Նուպար փաշա և Հայկական հարցը» աշխատության մեջ:

46. «Արյունոտ հիշատակներ»-ը թուրքական ռեակցիան և մեծ տերությունների կեղծ հայասիրությունը, դիվանագիտական խաղերը մերկացնող լավագույն գործն է այդ շրջանի արևմտահայ գրականության մեջ: Օտյանը որպես ականատես, ռեալիստական ցնցող գույներով ու մանրամասնություններով պատմում է Պոլսի 1896 թ. օգոստոսի 14-ի ջարդի, Պոլսից կատարած իր փախուստի մասին: Նա ջարդարարների կողմից հետապնդվելով մի կերպ ապաստանել էր ֆրանսիական Սիդոն նավում: Նավը ամբողջ գիշերը շերտ հեղուկ ծովափից և Օտյանը այդտեղից տեսել էր թուրքական բարբարոսների կատարած գազանությունները:

«Արյունոտ հիշատակներ»-ը նախ լույս տեսավ Լոնդոնի «Նոր կյանք»-ում (տե՛ս 1898, N 1, էջ 7, 21, 57, 135, սա. Վահրամ), ապա Կ. Պոլսում՝ առանձին հրատարակությամբ:

47. «Ժողովող» — Աստվածաշնչի գրքերից մեկն է (տե՛ս Գիրք ժողովողի), որը իր սկսկատիկական-քննադատական ոգու շնորհիվ արժանացել է Օտյանի հատուկ ուշադրությանը: Դեռևս 1890 թ. Օտյանը զբաղվել է դրանով և իր ուսումնասիրության արդյունքը հրատարակել է 1905 թ. (տե՛ս «Ուսումնասիրություն ժողովողի վրա», «Շիրակ», Կահիրե, 1905, N 5): Այդ ուսումնասիրությունը, Օտյանի մի շարք այլ երկերի նման, ունի հակակրոնական բնույթ:

48. Մենլիք հանդեսը «Անահիտ»-ն էր, որը սկսեց լույս տեսնել 1898 թ. նոյեմբերից: Օտյանը, ինչպես խոստանում է, առաջին իսկ համարից աշխատակցել է «Անահիտ»-ին: Նրա աշխատակցությունը տևեց մինչև 1901 թ., մինչև Զոպանյանի հետ ընդհարվելը:

49. Revue Encyclopedique (շաբաթաթերթ) — Փարիզի խոշոր հանդեսներից էր, որին աշխատակցում էր Զոպանյանը: Հանդեսի 1898 թ. N 8-ում լույս տեսավ Զոպանյանի՝ «Հայոց արդի գրականության վրա» հոդվածը, նույն թվականի օգոստոսի 27-ի և սեպտեմբերի 3-ի համարներում լույս տեսավ «Ուսումնասիրություն մը հայոց հին գրականության վրա» ընդարձակ ակնարկը հայ գրողների լուսանկարներով (Արուվյան, Ալիշան, Ա. Բագրատունի): Օտյանի խոսքը վերաբերում է, հավանաբար, այս ակնարկին:

50. Այդ հոդվածը լույս է տեսել «Անապատեն ձայն. մոսապ լեսիմ Շարապաս 5 հոկտ. 1898 թ.» վերնագրով (տե՛ս «Անահիտ», 1898, էջ 41—42)։ Այստեղ Օտյանը արտահայտում է իր՝ իրրև երգիծաբանի, դավանանքը, իրեն համարում է լեսիմ՝ ծաղր անող։

51. Լևոն Բաշայյան՝ «նոր կյանք»-ի խմբագիրը։

52. Այդ հոդվածը հավանաբար Օտյանի այն «հոդվածն» է («Վերգիլոս կարդացե՛ր եք»), որ ստորագրված է՝ «Բարիզ, 20 փետրվ. 1899» և լույս է տեսել «Անահիտ»-ի նույն թվականի № 4-ում։

53. Խոսքը վերաբերում է Զոպանյանի հրապարակային այն դասախոսություններին (Հայերն ու Ֆրանսիան), որ նա աշխարհագրական ընկերության (Société de géographie de l'Est) հրավերով կարդաց Ֆրանսիայի մի շարք քաղաքներում՝ Նանսի, Էպինայ, Պառլը Տյուք, Ինչպես նաև Բուրքուառ, Ռուրե, Լիլ, Նանտ (տե՛ս «Անահիտ», 1899, էջ 32)։ «Անահիտ»-ում այդ դասախոսությունների մասին կարդում ենք. «Հակառակ ծայրահեղ անկեղծության, որով բանախոսը հայ ժողովրդին դառնությունը հայտնեց ջարդերու միջոցին Ֆրանսիայի անտարբերությանը և չզվանք պ. Հանթթոյի (Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը— Ա. Մ.) «թուրք» քաղաքականությանը մասին, ունկնդիր հասարակությունը իր համակրական ծափերով և տեղական մամուլը իր խրախուսիչ գնահատումովը ապացուցեցին, թե համամիտ են հայ բանախոսին»։

54. Խոսքը բանաստեղծ Սիամանթոյի (Ատոմ Յարճանյանի) մասին է։

55. Լևոն Բաշայյան։

56. Այդ միության մասին Օտյանը խոսել է նաև իր «Տասներկու տարի Պոլսեն դուրս»-ում (տե՛ս հատ. IV, էջ 170—171)։

57. Օտյանը այդ տարիներից գործ էր ածում Երօտ կեղծանունը. Զերօտ-ը դրա ժխտական ձևն է։

58. Տիգրան Երկաթի այդ դասախոսությունը հրատարակեց Ա. Զոպանյանը (տե՛ս «Անահիտ», 1899, № 3, 1900, № № 4, 5)։

59. Վահե Արզույանը, որը դարձավ Ա. Արփիարյանի կատաղի հակառակորդը, Վերկ. հնչակյանների պարազլուխներից մեկը։

60. Մաքսուտ Միհրդատյանց— Փարիզի հայ ուսանողներից։

61. Երվանդ Մանվելյան— ուսանող, կենսաբան։

62. Պողոս Քոլոլյան, «Հայրենիք»-ի նախկին աշխատակիցներից մեկը. ականավոր բժիշկ և հասարակական գործիչ։

63. Օրիորդ Հովհաննեսյանը Զապելն է, հետագայի նշանավոր արձակագիր Զապել Եսայանը։

64. Փարիզում էին ապրում արձակագիր Մարի Սվաճյանը և նրա որդին՝ բանաստեղծ, դաշնակահար Վահրամ Սվաճյանը։

65. Տիգրան Եսայան, նկարիչ, հետագայում չ. Եսայանի ամուսինը։

66. 19 տարվա ընդմիջումից հետո սա Օտյանի առաջին նամակն է ուղղված Զոպանյանին։ Վերջինս գտնվելով Փարիզում, գերծ էր մնացել 1915 թ. աղետից, իսկ Օտյանը իր բազմաշարժար ժողովրդի հետ լիուլի ճաշակեց դրա բոլոր հետևանքները և վերջ ի վերջո հենց այդ աղետի զոհերից մեկը դարձավ։ Նա ևս քշվեց մինչև Տեր-Զոր։ 1918 թ. վերջերին նա վերադարձավ Կ. Պոլիս և վախճանվեց 1926 թ. Եգիպտոսում։

67. Այդ աշխատությունը եղավ նրա՝ «Թիվ 17 Խաֆիեն» մեծ վեպը՝ շորս հատորով, որը յամուլում սկսեց լույս տեսնել 1919 թ. վերջերից։ Առանձին հրատարակվել է Բեյրութում, 1937 թ.։

68. «Ժամանակ»— ժողովրդական օրաթերթ, ազգային, քաղաքական ու գրական. արտունետնր խմբագիր՝ Միսաք Գոչունյան, տնօրեն՝ Սարգիս Գոչունյան, խմբագրապետ՝ Պ. Քեչյան, Կ. Պոլիս։ Օտյանը այդ ժամանակ թերթի ղլխավոր աշխատակիցն էր։

ПИСЬМА Е. ОТЯНА А. ЧОПАНЯНУ

А. М. МАКАРЯН

(Р е з ю м е)

В литературном наследии великого армянского сатирика, романиста и публициста Ерванда Отяна особое место занимают его письма, адресованные известному публицисту, поэту и литературоведу Аршаку Чопаняну. Этих писем не много, всего 20; большей частью они написаны в 1896—1900 гг., и только два письма датированы 1919 годом.

Письма Отяна имеют как общественно-политическое, так и биографическое значение. Они помогают осветить отдельные стороны биографии и мировоззрения их автора, дают представление о вопросах и проблемах, занимавших Отяна в тот период. В них читатель может найти ответы на ряд злободневных вопросов того времени, сведения о ряде лиц и событий.

Здесь публикуются (с незначительными сокращениями) наиболее важные письма Отяна, подлинники которых хранятся в музее литературы и искусства Министерства культуры Армянской ССР.